## 18. ԳՅՈՒԼԱԹԱՂ ԳՅՈՒՂ

*Գյուղում եղել է Մելիքական ապարանք, այժմ հիմնապատերն են մնացել և բուրգերի կեսերը։ Գյուղի վերի գերեզմանոցի մեջ կա մի գեղաքանդակ խաչքար XIII դարի։*

***291. Մելիքական տան մուտքին եղել է՝***

Այս է Մելիք Աստուածա թվ. ՌՄԽԸ: (1799):

*Հրատ. Բարխուդարեանց, 215։*

## 19. ՄՆԾՇԵՆ ԳՅՈՒՂ

*Գյուղամիջի ս. Գևորգ եկեղեցին հիմնովին քանդված է. պատերին եղած երեք արձանագրությունը առնում ենք Բարխուդարյանցից.*

***292. Ս. ԳԵՎՈՐԳԻ ավազանի վրա եղել է.***

Թվ. ՌԿԹ: (1620). բնաս · · · յիշեցէք ի Քրիստոս.

*Հրատ. Բարխուդարեանց, 219։*

***293. Ս. ԳԵՎՈՐԳԻ խորանի հյուսիսային կողմում.***

Սուրբ խաչս բարեխաւս Կարապետ եպիսկոպոսին. սայ է լեալ պատճառ սուրբ եկեղեցոյս (շինութեան). թվ. ՌՂԹ: (1650):

*Հրատ. Բարխուդարեանց, 219։*

***294. ԽԱՉՔԱՐԻ վրա.***

Սուրբ խաչս բարեխաւս Հայրապետին, եղբայր պարոն տէր:

*Հրատ. Բարխուդարեանց, 219։*

## 20. ՍԱՂԱՎՈՒԶ ԳՅՈՒՂ ԵՎ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԿԱՄ ՔԸՂԸՔԱՏԵՂ

*Մաղավուզ գյուղում հին հուշարձաններ չկան, բայց գյուղից դեպի արևմուտք, Թարթառ գետի աջ ափին, Երից Մանկանց վանքի դիմաց տարածված են մի ընդարձակ և հին բնակավայրի ավերակները, որին տեղացիք Մայրաքաղաք կամ Քըղըքատեղ անունն են տալիս. այստեղ կան շատ հին և մելիքական շրջանի շինությունների ավերակներ, բերդի պարիսպներ ու բուրգեր, եկեղեցիների և մատուռների ավերակներ ու գերեզմանատուն։ Ոչ շատ հեռավոր անցյալում ավերակների ծայրում, գրեթե ամբողջ վիճակում, կանգնած է եղել Մելիք Աղամի ապարանքը։ Այդ բոլորն այժմ ծածկված են ծառերով և փշավոր թփերով, իսկ հնավայրի ավերակները շրջակա գյուղերի համար ծառայում են որպես քարհանք։*

*Գերեզմանատունն առավել մնացած է. Բարխուդարյանցն այստեղից արտագրել է հետևյալ արձանագրությունները.*

***295. ՄԱՏՈՒՌԻ մուտքի բարավորի վրա՝***

Թիւ ՉԹ: (1260) էր. կամաւ Աստուծոյ ես Խուտում շինեցի զեկեղեցիս. եղբայր իմ Վահրամշահ. ի յիշատակ մեզ և ծնողաց մերոց. ի յիշխանութեան Սւֆանին և յամիրութեան Փախրադինին և ի յառաջնորդութեան տէր Սուքիասին. յաղաւթս [յիշեցէք]:

*Հրատ. Բարխուդարեանց, 222։*

***296. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը եղել է վերոհիշյալ մատուռի մեջ։***

Թիւ ՈՂԹ: (1250):

*Հրատ. Բարխուդարեանց, 222։*

***297. ԽԱՉՔԱՐԻ վրա, նախորդի մոտ.***

Ես Գրի[գո]րս, անուցած տէր Նարսի կանգնեցի զ[խ]աչերս ծնողաց իմոց և ննջեցելոց:

*Հրատ. Բարխուդարեանց, 222։*